## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 11-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ

Նոյեմբերի 7-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցվեց Սուրբ Պատարագ, որի ավարտին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման եւ գահակալման 11-րդ տարեդարձի կապակցությամբ կատարվեց Հայրապետական մաղթանք:

Այս առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում համախմբվել էին թեմակալ առաջնորդներ եւ միաբաններ՝ շնորհավորելու Նորին Սրբությանը եւ աղոթք առաքելու առ Բարձրյալ Տերը՝ ազգընտիր Հայոց Հայրապետի կենաց արեւշատության ու քաջառողջ հովվապետության եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառության ու անսասանության համար:

Մինչ մաղթանքի արարողությունը պատարագիչ Տ. Արշակ եպիսկոպոս Տիգրանյանը Մայր Աթոռի միաբանության անունից երախտագիտության եւ շնորհավորանքի խոսք ուղղեց Նորին Սրբությանը: «Սուրբ Էջմիածինն իր գահակալով այն մշտաբուխ, կենսատու աղբյուրն է հայության, որ բխեցրեց մեր Տեր Հիսուս Քրիստոս: Փառք ու գոհություն անենակարող եւ նախախնամող Աստծուն: Փառք, որ մեզ դարձրեց իր ժողովուրդը, Սուրբ Գրիգոր Լուսավորչի աղոթասաց խնդրանքով Քրիստոս Իր էջքով եւ աստվածային փառքով լուսակերպեց Հայոց երկիրը, Արարատյան դաշտում գտնվող վաղարշապատյան Սուրբ Էջմիածինը: Այստեղից է Մայր Աթոռի հոգեւոր իշխանությունը ձգվում-տարածվում բոլոր այն վայրերը, աշխարհի այն կողմերը, ուր կան հայածին, լուսավորչական ժողովուրդ եւ հոգեւորականներ: Անկախ իրենց դիրքից եւ աստիճանից բոլորն անխտիր կապված են Սուրբ Էջմիածնի Աթոռին եւ նրա գահակալ Հայրապետների իշխանությանը, ովքեր Սուրբ Գրիգոր Լուսավորչի հաջորդներն են: Նրանց անխախտ եւ անվերապահ իշխանությունն է հայի աղոթքի տները հաստատել, բարեկարգել, կանոնական սահմաններում պահել, պակասը վերացնել», - իր խոսքում նշեց պատարագիչ Սրբազանը:

Մաղթանքի արարողության ավարտին ներկա ժողովրդին եւ եկեղեցականաց դասին իր օրհնությունը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

Նոյեմբերի 9-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության Ռոստովի մարզի նահանգապետ Վասիլի Գոլուբեւի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը մեծապես կարեւորեց փարբեր ոլորտներում Ռոստովի մարզի հետ Հայաստանի համագործակցությունը՝ վստահություն հայտնելով, որ այն պիտի առավել ամրապնդի երկու ժողովուրդների դարավոր կապերը եւ եղբայրությունը: Անդրադառնալով 2008 թ. Ռոստովի մարզ կատարած Հովվապետական իր այցին՝ Ամենայն Հայոց Հայրապետը գնահատանք հայտնեց Ռուսաստանի Դաշնության իշխանություններին եւ ի մասնավորի Ռոստովի մարզի նահանգապետին՝ մարզում հաստատված հայորդիների եւ Հայ Եկեղեցու նկատմամբ մշտապես ցուցաբերվող բարյացակամ եւ հոգատար վերաբերմունքի համար:

Իր հերթին Ռոստովի նահանգապետը շնորհակալություն հայտնեց հայոց հոգեւոր կենտրոն այցելելու հնարավորության եւ ջերմ ընդունելության համար: Պարոն Գոլուբեւը Նորին Սրբությանը ներկայացրեց իր այցի արդյունքները եւ նախանշված համագործակցությունը:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաեւ Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ եկեղեցիների ջերմ հարաբերություններին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԵՑ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ

Նոյեմբերի 13-14-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով ընդլայնված կազմով:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով, ապա Գերագույն Հոգեւոր խորհրդի անդամներն աղոթեցին խորհրդի հանգուցյալ անդամ Ռաֆայել Պապայանի հոգու հանգստության համար: Մինչ օրակարգին անցնելը ժողովականներին ողջունեց եւ իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Ժողովի նիստերն ատենապետեցին ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը եւ Ֆրանսիայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանը: Ժողովի օրակարգում ընդգրկված էին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու նվիրապետական Աթոռներին, թեմերին եւ միջեկեղեցական հարաբերություններին վերաբերող մի շարք հարցեր:

Օրակարգի հաստատումից հետո Խաժակ Սրբազանը զեկույց ներկայացրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսության եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կանոնական հանձնախմբի աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Ժողովականներին տեղեկացվեց նաեւ Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունում նոյեմբերի 15-18-ը գումարվելիք միաբանական ժողովի մասին: Գերագույն հոգեւոր խորհուրդը ողջունեց միաբանական ժողովի գումարումը՝ կարեւոր նկատելով Երուսաղեմի Հայոց



Ռոստովի մարզի նահանգապետը Վեհարանում